# Հարկային հաշիվ
(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | | [2] Սերիա | [3] Համար |
|---|---|---|---|---|
| 27 | Փետրվար | 2019 թ. | Ա | 0571250624 |

| [4] Մատակարարման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 27 | Փետրվար | 2019 թ. |

Կարգը (անհրաժեշտության դեպքում վանդակում նշել «X») | հատուկ

| Ճշգրտվող հաշվի | |
|---|---|
| Սերիա | Համար |
| | |

Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար | |
|---|---|---|---|
| | | | [7] |
| | | | [8] |
| | | | [9] |

[10] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

## Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

| | |
|---|---|
| [11] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 9 4 0 7 9 8 8 |
| [12] Անվանումը | ՆՅԱՐԴԱՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՄԱՐԶ. ԴԻՍՊ. Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ) |
| [13] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 9 4 0 7 9 8 8 / 1 |
| [14] Բանկային տվյալները | ՎՏԲ Հայաստան բանկ Կապան մ/ճ N 16022457801500 |
| [15] Գտնվելու վայրը (հասցեն) | ՍՅՈՒՆԻՔ ԿԱՊԱՆ ԿԱՊԱՆ Բաղաբերդի 48 |
| [16] Լրացուցիչ տվյալներ | |

## Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

| | |
|---|---|
| [17] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 2 6 3 1 2 6 3 |
| [18] Անվանումը | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ |
| [19] Բանկային տվյալները | ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն N 900011000834 |
| [20] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 |
| [21] Լրացուցիչ տվյալներ | |
| [22] Ում միջոցով | Անուն, ազգանուն |
| | Լիազորագիր — Համար |
| | Լիազորագիր — Ամսաթիվ |

[23] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը) | Չափման միավորը | Ընդհանուր ծավալը (ժամանակը, քանակը) | Միավորի գինը | Արժեքը | ԱԱՀ դրույքաչափը (%) | ԱԱՀ գումարը | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | Թիվ 41150619 քր. գործով դատահոգեբուժական փորձաքննություն | դեպք | 1 | 32833 | 32833 | 20 | 6566.6 | 39399.6 |
| Ընդամենը | | | | | 32833 | X | 6566.6 | 39399.6 |

Դուրս գրող՝ ALAVERDYAN ANAHIT 6711590040
անունը, ազգանունը

Ստացող

պաշտոնը (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

պաշտոնը (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

27/02/2019 15:00:41

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին

12-ը փետրվարի 2019թ. ք.Կապան

ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության քննիչ Գոռ Թովմասյանս, վերանայելով վարույթիս թիվ 41150619 քրեական գործի նյութերը.

պ ա ր զ ե ց ի՝

2019 թվականի հունվարի 16-ին՝ ժամը 16:30-ի սահմաններում, Կապանի Ձորք թաղամասի 11/4ա բնակարանում Սմբաթ Մխիթարի Հարությունյանն ընտանեկան հարցերի շուրջ ծագած վիճաբանության ընթացքում մեկ անգամ հարվածել է նախկին կնոջ՝ Ռուզաննա Դերենիկի Ավագյանի, դեմքին, ճանկռել ձախ ստործնոտային շրջանը և մեկ անգամ հարվածել ձախ ծնկահոդի շրջանին՝ վերջինիս պատաճառելով ձախ ստործնոտային շրջանի ճանկռվածքների և ձախ ծնկահոդի շրջանի արյունազրոման ձևով առողջության թեթև վնասի հատկանիշներ չպարունակող վնասվածքներ:

Դեպքի առթիվ 2019 թվականի հունվարի 26-ին ՀՀ ՈՍՄՎ Կապանի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է թիվ 41150619 քրեական գործը և ուղարկվել Սյունիքի մարզային քննչական վարչություն: Կատարվում է նախաքննություն:

2019 թվականի հունվարի 31-ին Սմբաթ Մխիթարի Հարությունյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

2019 թվականի փետրվարի 6-ին Սմբաթ Մխիթարի Հարությունյանը որպես մեղադրյալ է ներգրավվել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցավոր արարքի համար:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ Սմբաթ Մխիթարի Հարությունյանը 1999 թվականի հունիսի 30-ից առ այսօր «Թեթև աստիճանի մտավոր հետամնացություն, արտահայտված դեբիլություն» ախտորոշմամբ հաշվառված է «Սյունիքի մարզային Նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲ ընկերությունում:

Նկատի ունենալով, որ մեղադրյալ Սմբաթ Մխիթարի Հարությունյանի մոտ հոգեկան հիվանդության առկայությունն ու բնույթը որոշելու և գործի համար կարևոր նշանակություն ունեցող այլ հարցեր պարզելու համար անհրաժեշտ են դատական հոգեբուժության բնագավառի հատուկ գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, 243-րդ, 244-րդ, և 248-րդ հոդվածներով,

ո ր ո շ ե ց ի՝

1. Վարույթիս թիվ 41150619 քրեական գործով նշանակել դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել «Սյունիքի մարզային Նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲ ընկերության փորձագետներին:
2. Փորձաքննությանը ներկայացնել թիվ 41150619 քրեական գործն, իսկ Սմբաթ Մխիթարի Հարությունյանին՝ առաջին իսկ պահանջով:
3. Փորձագետներին պարզաբանման համար առաջադրել հետևյալ հարցերը.

ա/ Սմբաթ Մխիթարի Հարությունյանը նախկինում և ներկայումս հոգեկան հիվանդությամբ տառապո՞ւմ է, թե՞ ոչ, եթե այո, ապա ինչպիսի՞ հիվանդությամբ է տառապում և երբվանի՞ց,

բ/ Եթե Սմբաթ Մխիթարի Հարությունյանը տառապել է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը հանցավոր արարքը կատարելու պահին զրկե՞լ է նրան իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու և ղեկավարելու ընդունակությունից, թ՞ե ոչ,

գ/ Սմբաթ Մխիթարի Հարությունյանը մեղսունա՞կ է, սահմանափա՞կ մեղսունակ, թե՞ անմեղսունակ,

դ/ Եթե Սմբաթ Մխիթարի Հարությունյանը տառապում է հոգեկան հիվանդությամբ, ապա նա բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կարիք ունի՞, թե՞ ոչ, եթե այո, ապա ինչպիսի՞,

ե/ Սմբաթ Մխիթարի Հարությունյանն իր հոգեկան վիճակով կարո՞ղ էր ճիշտ ընկալել գործի համար կարևոր հանգամանքները և դրանք ճիշտ վերարտադրել, թ՞ե ոչ,

զ/ Սմբաթ Մխիթարի Հարությունյանն իր հոգեկան վիճակով ներկայումս կարո՞ղ է մասնակցել քննչական և դատավարական գործողությունների, թ՞ե ոչ:

4. Փորձագետներին խնդրել պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև սույն որոշման մեջ չկան, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն դատահոգեբույժ-փորձագետների իրավասության մեջ, և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

5. Հանձնարարել «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲ ընկերության դատահոգեբուժական փորձաքննությունների հանձնաժողովի նախագահին պարզաբանել փորձագետներին, ում հանձնարարվելու է փորձաքննության կատարումը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված փորձագետի իրավունքներն ու պարտականությունները և միաժամանակ նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով և նախաքննության տվյալները հրապարակելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Քննիչ՝ Գ.Թովմասյան